Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2025 թվականի հոկտեմբերի 19-25-ը Սերբիայի Հանրապետություն գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**

Կարեն Հովսեփյան – էներգետիկայի վարչության վերականգնվող էներգետիկայի բաժնի գլխավոր մասնագետ, բաժնի պետի պարտականությունները կատարող

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

2025 թվականի հոկտեմբերի 19-ից 25-ը ներառյալ, Սերբիայի Հանրապետություն (ք. Բելգրադ)

3. **Հրավիրող կողմը.**

Այցն իրականացվել է Եվրոպական միության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից համաֆինանսավորվող և Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող «Կայուն էներգիա հանուն Հայաստանում կլիմայակայուն համայնքային զարգացման (SE4Resilience)» ծրագրի շրջանակում

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

«Կայուն էներգիա հանուն Հայաստանում կլիմայակայուն համայնքային զարգացման (SE4Resilience)» ծրագրի շրջանակում 2025 թվականի հոկտեմբերի 20-24-ը կազմակերպվել է «Էներգետիկայի ոլորտում թվային գործիքներ» թեմայով ուսումնական այց Սերբիայի Հանրապետություն, որի նպատակն էր մասնակիցներին ներկայացնել Սերբիայի Հանրապետությունում էներգետիկ ոլորտում թվային գործիքների կիրառման փորձը:

5. **Քննարկված թեմաները.**

Այցի ընթացքում քննարկվել է էներգետիկ ոլորտում թվայնացման խթանման Սերբիայի փորձը՝ ցանցերի կառավարման նորարարական միջոցներից և հաշվառման «խելացի» համակարգերից մինչև տվյալների վրա հիմնված որոշումների ընդունում ու ինտեգրում՝ տարածաշրջանային էներգետիկ շուկա:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Հանդիպումներ են կազմակերպվել Սերբիայի էներգետիկ ոլորտի առանցքային կառույցների, էլեկտրաէներգիա, ինչպես նաև տեխնոլոգիաներ մատակարարող ընկերությունների ներկայացուցիչների հետ՝ անմիջական պատկերացում կազմելով, թե ինչպես կարող են թվային լուծումները բարձրացնել ցանցի կայունությունը, նպաստել

վերականգնվող էներգիայի ինտեգրմանը և բարելավել համակարգի ընդհանուր արդյունավետությունը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Պայմանավորվածություն է ձեռք բերվել պահպանել և ամրապնդել սերբական կողմի հետ ձեռք բերված կապերը և քննարկել հետագա համագործակցության հեռանկարները:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Ակնկալվում է Միխայիլ Պուպինի անվան ինստիտուտի կողմից ստանալ լրացուցիչ մասնագիտական նյութեր:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

28.10.2025թ.